ՀԱՄԱԶԱՆԳ

Երկիր, երկիր, երկիր, լսիր Տիրոջ խոսքը: Երեմիա 22.29

ԳՅՈՒՄՐԻԻ ՅՈԹԵՐՈՐԴ ՕՐՎԱ ԱԴՎԵՆՏԻՍՏՆԵՐԻ ԵԿԵՂԵՑԻ

Թողարկում 1

14 ապրիլի, 2012

ՓՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԶԱՆԳ



Վերածնված Աստծո խոսքով

«Համազանգ» պարբերականը հանդիսանում է Գյումրիի Յոթերորդ օրվա ադվենտիստների եկեղեցու տեղեկատվության բաժնի տեղեկագիրը:

Այն նպատակ է հետապնդում օգնել եկեղեցու անդամներին հոգևոր աճի և զարգացման ոլորտում: Հուսով ենք, որ այն կնպաստի արթնության գործընթացին, ներկայացնելով նյութեր, որ առնչվում են վերածննդին, բարենորոգությանը, աշակերտությանը և ավետարանչությանը:

Տեղեկագիրը լույս կընծայվի ելնելով անհրաժեշտությունից և հնարավորությունից: Ցանկություն կա այն թողարկել ամեն շաբաթ:

Տեղեկագրում տեղ կգտնեն նյութեր, որ կօգնեն քրիստոնյաներին ավելի լավ կազմակերպելու իրենց նվիրման գործընթացը և անհատական հոգևոր պարապմունքները՝ աղոթքը, Աստվածաշնչի ուսումնասիրությունը, մտորումները, հոգևոր ընթերցումները:

«Համազանգի» էջերում դուք կարող եք գտնել տեղեկատվության բաժնին վերաբերող նյութեր, որոնց թվում՝ ժամանակակից աշխարհում տեղի ունեցող իրադարձություններին համահունչ մարգարեությունների իրականացման լուսաբանումները:

Թող Աստված օրհնի, որ այս տեղեկագիրը նպաստի Ավետարանի տարածմանը, հանդիսանալով փրկության համազանգ:

«Երկիր, երկիր, երկիր, լսիր Տիրոջ խոսքը» (Երեմիա 22.29):

Խմբագիր

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԵԿԵՂԵՑՈՒ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆԸ



Յոթերորդ օրվա ադվենտիստների եկեղեցին բոլոր ժամանակներում համարվել է ժողովուրդ, որ իր հավատի հիմքը գտել է Աստվածաշնչում, սիրել է Աստծո խոսքը և ամեն օր կարդացել այն: Ոչինչ չի կարող փոխարինել Աստծուն լսելու հնարավորությունը, որ մեզ է դիմում Իր խոսքի միջոցով: Աստվածաշնչի վրա աղոթքով խորհրդածելը կարևորագույն աղբյուր է հոգևոր ուժի: Այդ պատճառով էլ ծնվել է ՅՕԱ համաշխարհային եկեղեցու «Նրա խոսքով վերածնված» նախաձեռնությունը, որը կիրագործվի «Աստվածաշունչը միասին ընթերցելով» նախագծի միջոցով, որի իմաստը նրանում է, որ միաբանի եկեղեցու բոլոր անդամներին Աստվածաշնչից մեկ գլուխ ամենօրյա ընթերցանության մեջ, այնպես որ սկսելով 2012 թվականի ապրիլի 17-ից, այն ավարտվի Վեհաժողովի համագումարի ժամանակ 2015 թ. հուլիսին: Ամեն օր մեկական գլուխ ընթերցելով, իսկ համագումարի ժամանակ՝ երկուական, միլիոնավոր հավատացյալներ կավարտեն իրենց ճանապարհորդությունը Հավերժա-կան գրքի էջերում, որ փոխում է մարդկանց սրտերն ու կյանքը: «Աստվածաշունչը միասին ընթերցելով» նախաձեռնությունը կարող է ողջ եկեղեցին միաբանել Աստծո Խոսքի շուրջ, եկեղեցու բոլոր անդամների ուշադրությունը Նրա կենդանի խոսքի միջոցով դարձնելով Հիսուս Քրիստոսին:

ՔՆՆԵՑԵՔ ԳՐՔԵՐԸ

Սիրելի բարեկամներ,

Ինձ շատ է դուր գալիս համաշխարհային եկեղեցու «Կարդում ենք Աստվածաշունչը միասին» նախաձեռնությունը, քանի որ Աստծվածաշնչի ուսումնասիրությունը ահռելի նշանակություն ունի քրիստոնյայի կյանքում: ՅՕԱ եկեղեցին մշտապես դրան ուշադրություն է դարձրել, բայց վերջին ժամանակներում նկատելի է նահանջ այդ մոտեցումից : Եկեք ամեն դեպքում վերադառնանք լավագույն ավանդույթներին. աղոթքին, Աստվածաշնչի ուսումնասիրությանը, աշակերտությանը և ավետարանչությանը: Նախաձեռնության համաձայն մենք պետք է ամեն օր մեկ գլուխ կարդանք: Իսկ ես առաջարկում եմ, որպեսզի դուք լրջորեն ուսումնասիրեք համապատասխան գլուխը, և այդ խորհրդին հետևելով կարելի է երեք տարվա ընթացքում ուսումնասիրել Աստվածաշունչը սկզբից մինչև վերջ: Դրա համար հաջորդ էջերում առաջարկում եմ Աստվածաշունչն ուսումնասիրելու մեթոդ: Այն շատ պարզ է, ուստի առայժմ առաջարկում եմ առանց մեկնաբանության:

Պավել Սարգսյան, հովիվ

Թ. ՈՒԻԼՍՈՆԻ ԵՎ Ջ. ՓԵՅՋԻ ՈՒՂԵՐՁԸ

Հարգելի բարեկամներ,

Մենք խանդավառությամբ դիմավորեցինք 2011 թ. Տարեկան խորհրդակցության ժամանակ ընդունված «Վերածնված Նրա խոսքով » Աստվածաշնչի ընթերցման համաշխարհային ծրագիրը, որի իրականացման սկիզբը պետք է հայտարարվի 2012 թ. ապրիլի 17-ին Վեհաժողովի Տարեկան խորհրդակցության ժամանակ:

Մենք հույս ունենք և աղոթում ենք այն մասին, որ մեր միլիոնավոր եղբայրներն ու քույրերը՝ ՅՕԱ եկեղեցու անդամները միանան մեզ Աստծո խոսքից ամեն օր մեկական գլուխ կարդալու և այն համատեղ 2015 թ. հուլիսին Վեհաժողովի համագումարի ժամանակ ավարտելու:

Մարկ Ֆինլին և Վեհաժողովի տեղեկատվության բաժնի աշխատակիցները կազմել են հրաշալի նյութերի գովազդային-տեղեկատվական հավաքածու, որը թույլ կտա պատրաստելու մեր եկեղեցու բոլոր անդամներին համատեղ կենտրոնանալու Աստվածաշնչի ուսումնասիրության վրա: Այդ հավաքածուն իր մեջ ընդգրկում է պաստառ, գրքույկ, տեղեկատվական հոդված, հանդեսների համար գովազդային հայտարարություններ և այլն: Ստեղծվում են նաև հեռուստայուժեներ, ինչպես նաև կօգտագործվեն սոցիալական ցանցերի հնարավորությունները: Հաղորդակցության համար կստեղծվի ամենօրյա բլոգ, որը կօգնի կիսվել օգտակար մտքերով տվյալ գլխի վերաբերյալ: Ներկայացված ողջ տեղեկատվությունը ցույց է տալիս մեր բուռն ցանկությունը կենտրոնանալ Աստվածաշնչի ուսումնասիրության վրա վերածննդի և բարենորոգության համար: «Կարդում ենք Աստվածաշունչը միասին» նախաձեռնությունը կարող է միավորել ողջ եկեղեցին Աստծո խոսքի շուրջ, եկեղեցու անդամների ուշադրությունը դարձնելով Հիսուսին Նրա խոսքի միջոցով մոտենալու վրա: Մենք հույս ունենք, որ մեր եկեղեցու անդամները կստանան սույն տեղեկատվությունը, որպեսզի համատեղ սկսենք ընթերցումը, երբ Բաժանմունքների նախագահները մեզ օրինակ կտան, կարդալով Ծննդոց գրքի 1 և 2 գլուխները Վեհաժողովի Կիսամյա խորհրդակցության ժամանակ:

Մեկ անգամ ևս շնորհակալություն ենք հայտնում նրա համար, որ դուք օգնում եք, որ մեր ժողովուրդը վերածնվի Նրա խոսքով, Նրա գալուստին մոտենալուն զուգընթաց: Մենք աղոթում ենք բոլոր նրանց համար, ովքեր շարունակում են քայլել և համագործակցել մեր Տիրոջ հետ:

Քրիստոսով ձեր եղբայրներ՝
Թեդ Ուիլսոն,
Վեհաժողովի նախագահ,
Ջերի Փեյջ,
Վեհաժողովի հովվական ասոցիացիայի քարտուղար

ՎԵՐԱԾՆՎԱԾ ՆՐԱ ԽՈՍՔՈՎ

Աստվածաշունչը պատմականորեն համարվում է Յոթերորդ օրվա ադվենտիստների եկեղեցու գոյության հիմքը: Ադվենտիստները ժողովուրդ են, որ հիմնվում են Աստվածաշնչի վրա, հավատում են Աստվածաշունչին և կարդում են այն: Համաշխարհային եկեղեցու նոր նախաձեռնությունը, որ «Վերածնված Նրա խոսքով» անվանումն է ստացել և համակարգվում է վերածնունդի և բարենորոգության հանձնաժողովի կողմից, ուղղված է յուրաքանչյուր հավատացյալի հոգևոր փորձառությունը ամրապնդելուն:

«Աստծո խոսքի ուսումնասիրությունը, որ բերում է Քրիստոսով փոխված կյանքի փորձառությանը, իրենից ներկայացնում է վերածննդի հիմքը (Մարկ Ֆինլի, ՅՕԱ եկեղեցու նախագահի օգնական ավետարանչության գծով):

«Ոչինչ չի կարող փոխարինել Աստծուն ունկնդրումը, որ մեզ է դիմում Իր խոսքի միջոցով» (Արմանդո Միրանդա, ՅՕԱ եկեղեցու փոխնախագահ):

«Իմ անձը կպավ հողի հետ. ապրեցրու ինձ քո խոսքի պես» (Սաղմոս 119.25):

«Վերստին ծնված լինելով ոչ թե ապականության սերմից, այլ անապական սերմից. Աստծո կենդանի և հավիտենական խոսքով» (Ա Պետրոս 1.23):

«Եվ հիմա՝ ձեզ Աստծուն եմ հանձնում, եղբայրներ, և Նրա շնորհքի խոսքին, որ նա կարող է շինել և ամեն սրբվածների հետ ձեզ ժառանգություն տալ» (Գործք 20.32):

«Ոչինչ այնպես չի կարող զորացնել միտքը, որքան Աստծո խոսքի ուսումնասիրությունը: Ոչ մի այլ գիրք ի վիճակի չէ վեհացնելու մտքերը և ուժեղացնելու ունակությունները, որքան Սուրբ Գրքի խորիմաստ, ազնվացնող ճշմարտությունները: Եթե Աստծո խոսքն ուսումնասիրվեր ինչպես հարկն է, մարդիկ այնպիսի լայն մտահորիզոն, բնավորության այնպիսի վեհանձնություն և նպատակի կայունություն կունենային, որ հազվադեպ են մեր ժամանակներում (Քայլեր դեպի Քրիստոս, 82):

Աստծո խոսքի ուսումնասիրությունը ունի երեք բաղկացուցիչներ, որ բերում են վերածննդին.

1. Այն ապահովում է ճշմարիտ վերածնունդի հիմքը:
2. Այն խթանում, օժանդակում և ամրապնդում է ճշմարիտ վերածնունդը:
3. Այն հակազդում է կեղծ վերածնունդին:

Նախաձեռնության համառոտ շարադրանքը

Եկեղեցու անդամներին առաջարկվում է կարդալ կամ լսել մեկական գլուխ Աստվածաշնչից, սկսելով 2012 թ. ապրիլի 17-ից Վեհաժողովի Կիսամյա խորհրդակցության առաջին օրվանից:

Սույն ծրագիրը ենթադրում է, որ սկզբում Վեհաժողովի նախագահը, բաժանմունքների նախագահների հետ միասին կկարդան Ծննդոց 1 գլուխը, իսկ 2015 թ. համագումարի ժամանակ կավարտեն այս նախաձեռնությունը, կարդալով Հայտնության 22 գլուխը:

1171 օրերի ընթացքում նախաձեռնության մասնակիցներին սպասվում է Աստվածաշնչի 1189 գլուխների ընթերցումը: Ամեն օր մեկական, իսկ համագումարի ժամանակ՝ երկուական գլուխ կարդալով, միլիոնավոր հավատացյալներ կավարտեն իրենց ճանապարհորդությունը այդ գրքի էջերում:

Նրա խոսքով միավորված

«Վերածնված Նրա խոսքով» նախաձեռնությունն ավելին է, քան միայն Աստվածաշնչից մեկական գլուխ կարդալը կամ ուկնդրելը: Այն կընդգծի Քրիստոսին մոտենալու կարևորությունը յուրաքանչյուր հավատացյալի համար:

Այն կխրախուսի հավատացյալների ընտանիքներին համատեղ ամբողջ Աստվածաշունչը ընթերցելուն:

Տվյալ նախաձեռնությունը պարզ է, գործնական և հասանելի:

«Վերածնված Նրա խոսքով» նախաձեռնությունը կարող է միավորել ողջ եկեղեցին Աստծո խոսքի շուրջ և դեպի լավը փոխել միլիոնավոր մարդկանց կյանքը: Այն կարող է դրդել հավատացյալին Աստծո խոսքի համակարգված ուսումնասիրության:

Տվյալ նախաձեռնության նպատակն է դրդել եկեղեցու բոլոր անդամներին թույլ տալ Սուրբ Հոգուն փոխել սեփական կյանքը, երբ նրանք խորհելու և աղոթելու են ամեն օր Աստվածաշնչի ուսումնասիրվելիք գլխի հիման վրա:

«Ես կցանկանայի յուրաքանչյուր հավատացյալի հրավիրել միանալ ՅՕԱ համաշխարհային եկեղեցու ընտանիքին, ամեն օր կարդալով մեկական գլուխ Աստվածաշնչից սկսելով 2012 թ. ապրիլի 17-ից և այն ավարտելով 2015 թ. ամռանը Վեհաժողովի համագումարի ժամանակ:

Ես վստահ եմ, որ այդ ճանապարհորդությունը Աստծո խոսքի էջերում մեզ կմոտեցնի Հիսուսին: Աղոթքով կարդալով և խորհելով Աստծո խոսքի շուրջ, մեզանից յուրաքանչյուրը նոր փորձառություն կստանա Փրկչի հետ հաղորդակցության արդյունքում. սպասելով Նրա մուտալոտ գալուստին» (Թեդ Ուիլսոն):

ԱՍՏՎԱԾԱՇՈՒՆՉՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐԵԼՈՒ ՄԵԹՈԴ.
«ՅՈԹ ՅՈԹՆՅԱԿ (49) ԱՆԳԱՄ ԸՆԹԵՐՑՈՒՄ»

1-ին ընթերցում. Ծանոթանալ բովանդակությանը

2-րդ ընթերցում. Վերնագիր գտնել (նախնական)

3-րդ ընթերցում. Ենթավերնագրեր գտնել (նախնական)

4-րդ ընթերցում. Ուշադրություն դարձնել շաղկապող բառերին (եթե, սակայն, որովհետև և այլն)

5-րդ ընթերցում. Պատասխանել «ո՞վ» հարցին (ովքե՞ր, ո՞ւմ. ես, դու, նա, մենք, դուք, նրանք)

6-րդ ընթերցում. Պատասխանել «ե՞րբ» հարցին (ժամանակ)

7-րդ ընթերցում. Պատասխանել «որտե՞ղ» հարցին (աշխարհագրական առումով)

8-րդ ընթերցում. Պատասխանել «ի՞նչ» հարցին (ստուգաբանական իմաստ, քերականական հարաբերություն)

9-րդ ընթերցում. Պատասխանել «ի՞նչ» հարցին (բայի ժամանակներ, որ բառը որով է որոշվում)

10-րդ ընթերցում. Պատասխանել «ի՞նչ» հարցին (բանալի բառը նշել ուսումնասիրության օրագրում)

11-րդ ընթերցում. Պատասխանել «ի՞նչ» հարցին (պարզել հատվածի բնույթը. ուսմունք, պատմություն, քնարերգություն և այլն)

12-րդ ընթերցում. Պատասխանել «ինչո՞ւ» հարցին (պատճառ, հետևանք, նպատակ)

13-րդ ընթերցում. Դուրս գրել ուսումնասիրվելիք բառերը (փոքր հատվածի համար՝ բոլոր բառերը)

14-րդ ընթերցում. Ընթերցել այլ թարգմանություն (արևմտահայերեն)

15-րդ ընթերցում. Ընթերցել այլ թարգմանություն (Էջմիածնի նոր թարգմանություն)

16-րդ ընթերցում. Ընթերցել այլ թարգմանություն (ռուսերեն)

17-րդ ընթերցում. Ընթերցել այլ թարգմանություն (անգլերեն)

18-րդ ընթերցում. Ընթերցել այլ թարգմանություն (բնագիր՝ եբրայերեն, հունարեն)

19-րդ ընթերցում. Պարզել բառի իմաստը (տառացի, քանի իմաստ ունի, իմաստը տվյալ հատվածում)

20-րդ ընթերցում. Օգտվել համաբարբառից

21-րդ ընթերցում. Օգտվել զուգահեռ վկայություններից

22-րդ ընթերցում. Պարզել նախադասության կառուցվածքը (ենթակա, անսովոր կառուցվածք, թարգմանության տարբերակ)

23-րդ ընթերցում. Պարզել նախադասության տեսակը (փաստի արձանագրում, հարց, հրաման, բացականչություն)

24-րդ ընթերցում. Պարզել մարդկանց, վայրերին, առարկաներին վերաբերվող դերանունները (կրկնվում է «ո՞վ» հարցը)

25-րդ ընթերցում. Ուսումնասիրել գլխի համատեքստը

26-րդ ընթերցում. Ուսումնասիրել գրքի համատեքստը

27-րդ ընթերցում. Ուսումնասիրել Աստվածաշնչի համատեքստը

28-րդ ընթերցում. Ուսումնասիրել պատմական համատեքստը (մեկնաբանություններ, տեղեկատուներ և այլն)

29-րդ ընթերցում. Պատասխանել «ե՞րբ» հարցին

30-րդ ընթերցում. Պատասխանել «որտե՞ղ» հարցին

31-րդ ընթերցում. Պատասխանել «ի՞նչ» հարցին (ընդհանուր առմամբ)

32-րդ ընթերցում. Պատասխանել «ի՞նչ» հարցին (ընդգծել բանալի բառը)

33-րդ ընթերցում. Պատասխանել «ինչո՞ւ» հարցին

34-րդ ընթերցում. Պարզել մեր օրերում տվյալ սկզբունքի կիրառության հարցը (դուրս գրել խոստումները)

35-րդ ընթերցում. Գտնել պատվերներն ու նախազգուշացումները

36-րդ ընթերցում. Գտնել օրինակ հետևելու համար կամ սխալ՝ խուսափելու համար

37-րդ ընթերցում. Պարզել սկզբունքը սեփական կյանքում կիրառելու հարցը (խրատ, դաս, ի՞նչ փոխել իմ կյանքում)

38-րդ ընթերցում. Անել գրավոր եզրակացություններ

39-րդ ընթերցում. Գրել սեփական մեկնաբանությունները

40-րդ ընթերցում. Առանձնացնել և սովորել անգիր համարները

41-րդ ընթերցում. Ընթերցել վերապատմելու (գրելու) համար

42-րդ ընթերցում. Վերնագրել հատվածը

43-րդ ընթերցում. Դնել ենթավերնագրերը

44-րդ ընթերցում. Ի՞նչ ներշնչում ստացա այս հատվածից

45-րդ ընթերցում. Հարցեր կազմել մրցույթների համար

46-րդ ընթերցում. Կատարել նշումները Աստվածաշնչի մեջ (ամենակարևոր պահերը)

47-րդ ընթերցում. Կատարել նշումները Աստվածաշնչի մեջ (մնացած պահերը)

48-րդ ընթերցում. Աղոթք-շնորհակալություն

49-րդ ընթերցում. Քարոզել, ելույթ ունենալ տվյալ հատվածի հիման վրա

© Pavel Sargsyan

2012 Թ. ԱՍՏՎԱԾԱՇՆՉԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՕՐԱՑՈՒՅՑ

ԱՊՐԻԼ	Նշումներ
17- Ծննդոց 1,	Կատարված է ☐
18- Ծննդոց 2,	Կատարված է ☐
19- Ծննդոց 3,	Կատարված է ☐
20- Ծննդոց 4,	Կատարված է ☐
21- Ծննդոց 5,	Կատարված է ☐
22- Ծննդոց 6,	Կատարված է ☐
23- Ծննդոց 7,	Կատարված է ☐
24- Ծննդոց 8,	Կատարված է ☐
25- Ծննդոց 9,	Կատարված է ☐
26- Ծննդոց 10,	Կատարված է ☐
27- Ծննդոց 11,	Կատարված է ☐
28- Ծննդոց 12,	Կատարված է ☐
29- Ծննդոց 13,	Կատարված է ☐
30- Ծննդոց 14,	Կատարված է ☐

Ապրիլ. Ծննդոց 1-14

Մայիս. Ծննդոց 15-45

Հունիս. Ծննդոց 46 - Ելից 25

Հուլիս. Ելից 26 - Ղևտացիս 16

Օգոստոս. Ղևտացիս 17 - Թվոց 20

Սեպտեմբեր: Թվոց 21 - 2 Օրինաց 14

Հոկտեմբեր: 2 Օրինաց 15 - Հեսու 11

Նոյեմբեր. Հեսու 12 - Դատ. 17

Դեկտեմբեր. Դատ. 18 - Ա Թագ. 23

Այցելեք մեր եկեղեցու adventist.ru կայքը և կգտնեք մանրամասներ այս նախաձեռնության մասին, ինչպես նաև ուսումնասիրության գործիքներից, որ ներկայացված են կայքում:

Կարդացեք նաև ՅՕԱ եկեղեցու հովվի կայքը և բլոգը.

www.elpidos.narod.ru
www.christian7habits.blogspot.com

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Հրատարակիչ. Գյումրիի Յոթերորդ օրվա ադվենտիստների եկեղեցի, հեռախոս՝ (+312) 5 18 09
Խմբագիր՝ Պավել Սարգսյան
Հեռախոս՝ (+374) 93 22 76 77, (+374) 95 86 05 31
Էլ. հասցե՝ pavelsargsyan@yahoo.com
Բլոգ՝ www.christian7habits.blogspot.com
Կայք՝ www.elpidos.narod.ru
Եկեղեցու տեղեկատվության բաժնի վարիչ՝ Կարինե Խաչատրյան
Հեռախոս՝ (+374) 93 93 45 94
Տեղեկատվության բաժնի խորհրդի անդամներ՝ Կարինե Խաչատրյան, Հովհաննես Գառգալոյան, Սահականուշ Գևորգյան, Հասմիկ Ղազարյան, Պավել Սարգսյան